ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

ՀՀ քաղաքաշինության կոմիտեն, որը գտնվում է ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3 հասցեում ստորև ներկայացնում է իր կարիքների համար ՀՀ Տավուշի մարզի ք.Դիլիջանի կոմպոզիտորների միության ստեղծագործական տան Բեթհովենյան դահլիճի վերանորոգման նախագծահետազոտական աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀՔՊԿ-ԳՀԱՇՁԲ-18/9 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2018 թվականի հունիսի 6-ին կնքված N ՀՀՔՊԿ-ԳՀԱՇՁԲ-18/9 պայմանագրում 2018 թվականի հոկտեմբերի 30-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ	Կապալառուի կողմից ներկայացրած գրություն:
Փոփոխության նկարագրություն	Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման ժամկետի երկարաձգում:
Փոփոխության հիմնավորում	Պատասխանատու ստորաբաժանման եզրակացություն և պայմանագրի 7.5 և 7.6 կետեր:

Պատվիրատու՝ ՀՀ քաղաքաշինության կոմիտե

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1
06.06.2018թ. կնքված N ՀՀՔՊԿ-ԳՀԱՇՁԲ-18/9 գնման պայմանագրի

ք. Երևան 30 հոկտեմբերի 2018թ.

ՀՀ քաղաքաշինության կոմիտեն (այսուհետ՝ Պատվիրատու)՝ ի դեմս կոմիտեի գլխավոր քարտուղար Ա. Մկրտչյանի, որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և <<Թ.Ա.Հ.Գ. ԳՐԻԳ>> ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կատարող)՝ ի դեմս ընկերության տնօրեն Լ.Գրիգորյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից՝ երկուսը միասին (այսուհետ՝ Կողմեր) հիմք ընդունելով 06.06.2018թ. ՀՀ Տավուշի մարզի ք.Դիլիջանի կոմպոզիտորների միության ստեղծագործական տան Բեթհովենյան դահլիճի վերանորոգման նախագծահետազոտական աշխատանքների իրականացման համար կնքված N ՀՀՔՊԿ-ԳՀԱՇՁԲ-18/9 գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 7.5 և 7.6 կետերը, կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

1.1 Կողմերը որոշեցին Պայմանագրի հավելված N 1-ով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի կատարման ժամկետ սյունակում <<150>> թիվը փոխարինել <<180>> թվով:

2. Այլ պայմաններ

2.1 Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Համաձայնագրում կողմերի համար չնշված՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները մնում են անփոփոխ:

2.3 Համաձայնագիրը կազմված է 1 (մեկ) էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝	ԿԱՏԱՐՈՂ՝
ՀՀ քաղաքաշինության կոմիտե ք. Երևան, Հանրապետության հրապարակ կառավարական տուն 3 ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն Հ/Հ 900011019131 ՀՎՀՀ 02565827	<<Թ.Ա.Հ.Գ. ԳՐԻԳ>> ՍՊԸ ք. Երևան, Թոթովենցի 12/28 <<ՎՏԲ-Հայաստան Բանկ>> ՓԲԸ թիվ 15 մ/ճ Հ/Հ 16054008264300 ՀՎՀՀ 00857439
Գլխավոր քարտուղար՝	Տնօրեն՝
_____ Ա. Մկրտչյան (ստորագրություն) Կ.Տ.	_____ Լ.Գրիգորյան (ստորագրություն) Կ.Տ.